ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

« ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մակյան
Հանձնաժողովի անդամներ Լ.Հարությունյան, Ն.Յոլչյան,Լ.Մանուկյան, Ե.Խանումյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Գսպոյան

1. Գնանշման հարցման առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

(Ա.Մակյան)

1.1 Փաստաթղթերի գնահատման՝

- վայրը՝ ք.Երևան, Մ.Բաղրամյան պողոտա 78:
-օրը՝ 08.05.2019թ.

-ժամը՝ 11:00

1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի տվյալների ճշտման մասին հարցում է կատարելվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, որի կողմից սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ Մեյդ Թու Մեյք ՍՊԸ-ի հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.2 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սույն գնման ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ 12000 /տասներկու հազար/ ՀՀ դրամի չափով, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը, 44-րդ կետը, որոշեց մերժել «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի հայտը և 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբզղեցրած մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբզղեցնող Էկոմիքս ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին «Էկոմիքս» ՍՊԸ-ին ՝առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝		Ա.Մակյան
Անդամներ՝		Լ.Հարությունյան
		Ն.Յոլչյան
		Լ.Մանուկյան
		Ե.Խանումյան
Համակարգող՝		Ա.Գսպոյան